

Թիւ 27890
Յուլիս 7, 1981

Արժանաշնորհ
Տ. Յուսիկ Բհնյ. Նշանեան
Առժամեայ Հոգեւոր Հովիւ
Ս. Խաչ Հայց. Սկեղեցւոյ
Թորոնթօ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Տորթ. Վախէ Սվաճեան անձնապէս մեզի յանձնեց Յունիս 16, 1981 թը-
լակիր Ժիսկան Խորհուրդիդ նամակը:


Տրուած ըլլալով որ Ժիսկան Խորհուրդիդ ներկայացուցիչներուն հետ
տեղի ունենալիք հանդիպումը արդէն իսկ որոշուած էր, վստահ ենք որ
համաձայն այդ որոշումին տեղի ունեցաւ հանդիպումը համերաշխ մթնոլոր-
տի մէջ եւ ծրագրուեցան անոր բարի հետեւանքները:

Կը սպասենք յիշեալ հանդիպումի տեղեկագրումին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Ժիսկան Խորհուրդի Ատենապետին



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto. 16. Յուլիս. ... 1981..

Գերշ. Տէր
Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրթ.

Սրբազան Հայր,

Ժխական Խորհուրդս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Ձերդ Սրբազնութեան, որ մեր խնդրանքին ընդառաջելով, բարեհաճ կարգադրութեամբ, 9 Յուլիս 1981 երեքշաբթի օր, ընդունած էք ժխական Խորհուրդիս պատուիրակութիւնը եւ անոնց շնորհաճ բաւական երկար տեսութիւն մը, որ եղած է շինիչ ու հասկացողական մթնոլորտի մը մէջ:

Ստացանք ժխական Խորհուրդի եւ Թեմական Պատգամաւորներու իւրաքանչիւրին դրկուած, Ձերդ Սրբազնութեան, Եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւին ուղղեալ, 9 Յուլիս 1981 թուակիր նամակը:

Մեր պատուիրակութեան կողմէ, ինչպէս Ձերդ Սրբազնութեան բացատրուած էր, ծուխս Առաջնորդարանի հանդէպ իր ունեցած բարոյական եւ նիւթական պատասխանատուութեան գիտակից է: Տուրք չվճարելու հարց բացարձակապէս չկայ:

Ձերդ Սրբազնութեան ցուցմունքներուն եւ Առաջնորդարանի փաստաբանին կողմէ պատրաստուելիք ուղղեցոյց թելադրութիւններու օգնութեամբ, պիտի դիմենք Տուրքերու Գործակալութեան, որպէսզի մեր Թեմական տուրքը Առաջնորդարան փոխանցելու իրենց հաւանութիւնը ստանանք:

Պատուիրակութեանս Ձերդ Սրբազնութեան հետ ունեցած տեսութեան ընթացքին ինչպէս բացատրուած է, այս բոլորը որոշ ժամանակաշրջանի մը կը կարօտին:

Նկատի ունենալով թէ, նամակի պարունակութեան մէջ յիշուած բոլոր հարցերը Ձերդ Սրբազնութեան հետ իրենց մանրամասնութեամբ տեսակցուած է ու պատուիրակութեանս խնդրանքը Ձերդ Սրբազնութեան բարեհաճ ընդունելութիւնը գտած, Ձերդ Սրբազնութենէն եւ Թեմական Խորհուրդէն անգամ մը եւս կը խնդրենք, որ առնուած որոշումներու զործադրութիւնը, բարեհաճ տնօրինութեամբ, առ այժմ յետաձգուին որպէսզի՝

Ա- ծուխիս ներկայացուցիչը կարենայ Գանատական Թեմի կազմութեամբ զբաղող յանձնախումբի 26 Յուլիսի եւ յաջորդական նիստերուն մասնակցիլ.

Բ- ծխական խորհուրդի եւ Թեմական Պատգամաւորներուն, նշանակուած յանձնախումբի հետ հանդիպումը, փոխանակ 1 Յուլիսի -որ Գանատակայի կարեւորագոյն տօներէն մէկն է -, կայանայ այնպիսի թուականի մը, որ յանձնախումբը դրական տեղեկատուութիւն մը կարենայ պատրաստել.

Գ- Տարեկան Անդամական ժողովին, ծխական խորհուրդի անդամ ընտրուած անձերը վաւերացուիմ.

Պատուիրակութեանս Չերդ Սրբազնութեան հետ ունեցած արդիւնաւոր, շինիչ ու անկեղծ տեսութեան արդիւնք, կը յուսանք թէ՛ մեր վերոյիշեալ խնդրանքները կ'արժանանան Չերդ Սրբազնութեան եւ Թեմական խորհուրդին դրական տնօրինութեան:

Մատչիմք ի Համբոյր
Չերդ Սրբազնութեան Աջին
ի Դիմաց
ծխական խորհուրդի

Տորթ. Վաչէ Բերամեթլեան
Տօքթ. Վաչէ Բերամեթլեան
Ատենադպիր

Արմէն Բիւրքճեան
Արմէն Բիւրքճեան
Ատենապետ